Նվիրվում է Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին

ԼԻԱՆԱ ԱՐՄԵՆԻ
ՊՈՂՈՍՅԱՆ

Երաժշտագետ, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի բակալավրական կրթության 4-րդ կուրսի ուսանող
E-mail: lianapoghosyan.musicologist@gmail.com
Doi:10.58580/18290019-2023.2.65-19

Ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի դոցենտ Լուսինե Զավենի Սահակյան

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Ծովինար Հրայրի Մովսիսյանի՝ 21.11.2023 թ.,
ընդունվել է տպագրության՝ 25.11.2023 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 2.10.2023 թ.

ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԸ ԽԱՉԱՏՐՅԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇԱՌԱՎԻՂ

Ամփոփում

Հոդվածագիրը ներկայացնում է Առնո Բաբաջանյանի և Արամ Խաչատրյանի հանդիպումները թե կյանքում և Առնո Բաբաջանյանի ստեղծագործական բնագավառում ուղենշումները հանճարեղ Արամ Խաչատրյանի կողմից: Նրա խորհուրդները՝ Ա. Բաբաջանյանի մանուկ տարիքում, այնուհետև երիտասարդ և, հետագայում նրա խորհուրդները՝ կրթության հարցում մոսկովյան շրջանում: Ա. Խաչատրյանի ազդեցությունը Բաբաջանյանի ստեղծագործական գործընթացում թե՛ ժանրային, և թե՛ ստեղծագործությունների կառուցվածքային, և թե՛ ոճական առումներով:
Բանալի-բառեր. Առնո Բաբաջանյան, Արամ Խաչատրյան, կեսագրություն, կոմպոզիտոր, կանխորոշող ճակատագրական հանդիպումներ, հայ կոմպոզիտորական դպրոց:

Abstract

Musicologist, 4th-year bachelor student at Yerevan Komitas State Conservatory ***Liana Armen Poghosyan. - "Arno Babajanyan as a Descendant of the Khachaturian School".***

The author of the article presents the encounters between Arno Babajanyan and Aram Khachaturian, and the guidelines in the life and creative sphere of Arno Babajanyan offered by the genius Aram Khachaturian. These include his advice during Babajanyan 's childhood, later in his youth, and subsequently during his study years in Moscow. Khachaturian 's influence on Babajanyan 's creative process is analyzed in terms of genre, structure and stylistic aspects of his works.
Key Words: *Arno Babajanyan, Aram Khachaturian, biography, composer, predetermining fateful meetings, Armenian school of composition.*

Абстракт

Музыковед, студентка 4-го курса бакалавриата Ереванской государственной консерватории им. Комитаса ***Лиана Арменовна Погосян. - "Арно Бабаджанян - продолжатель хачатуряновской школы".***

Автор статьи представляет встречи Арно Бабаджаняна и Арама Хачатуряна как в жизни, так и в творческой сфере. Арам Хачатурян предсказал композиторское будущее А. Бабаджаняна. Его советы в детстве, в юности, затем в годы московского периода обучения имели большое значение. Влияние Хачатуряна на творческий процесс Бабаджаняна выразилось как в жанровом, так и в структурном и стилистическом аспектах произведений.
Ключевые слова: *Арно Бабаджанян, Арам Хачатурян, биография, предопределяющие судьбоносные встречи, армянская композиторская школа.*

Նվիրվում է Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին

Առնո Բաբաջանյանը հայ երաժշտական արվեստի ցայտուն և ինքնատիպ ներկայացուցիչներից է, այն անհատներից, որոնք կոչված են ներկայացնելու սեփական ժողովրդի դարավոր մշակույթը: Առնո Բաբաջանյանը կոմպոզիտոր էր ու ականավոր դաշնակահար, նրա բացառիկ օժտվածությունը երևան եկավ վաղ տարիքից: Իր ողջ կյանքի ընթացքում, նա պահպանեց արվեստագետի իր յուրօրինակ նկարագիրն ու անհատականությունը:

Կոմպոզիտորի ստեղծագործական ժառանգությունը ներկայանում է բազմաժանր և մշտապես՝ գեղարվեստական բարձրարժեք գործերով: Առնո Բաբաջանյանի երաժշտական մտածողության մեջ ներդաշնակորեն միահյուսված են ավանդականն ու արդիականը, դասական ու ժամանակակից կոմպոզիտորական հնարքները:

Ա. Բաբաջանյանն արդիականության և ազգայինի զուգորդման իր նկարագիրը բերեց՝ փնտրելով արդիականության գաղափարական և գեղագիտական պահանջներին համապատասխան արտահայտչական նոր միջոցներ: Նա, ինչպես յուրաքանչյուր տաղանդ, բազմաթիվ թելերով կապված էր և՛ համաշխարհային երաժշտության, և՛, իհարկե, ազգային երաժշտության լավագույն ավանդույթներին:

Իբրև դաշնակահար՝ Բաբաջանյանը դարձավ ռախմանինովյան դպրոցի մի ինքնատիպ դեսպան հայ իրականության մեջ:

Նրա ստեղծագործական կյանքի հասունացման ճանապարհին իր կարևորագույն դերն ունեցավ հայ նոր կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Արամ Խաչատրյանը, որի հետ նա կապվեց բազմաթիվ թելերով: Այս տարի նշվում է Արամ Խաչատրյանի 120-ամյակը և այս հոդվածը մի փոքր անդրադարձ է հայ երաժշտարվեստի մեծերին՝ Արամ Խաչատրյանին և Առնո Բաբաջանյանին:

Ա. Բաբաջանյանի և նրա սերնդակից կոմպոզիտորների ստեղծագործական կյանքում Արամ Խաչատրյանը անջնջելի հետք է թողել ոչ միայն ստեղծագործական հայացքների ձևավորման հարցում, այլև իր մեծագույն աջակցությամբ:

Խորհրդային անծայրածիր երկրում, նաև արտերկրում, Արամ Խաչատրյանն անվերապահ հեղինակություն էր: Այդպիսի մեծության խոսքն ու գնահատանքը, շատ հաճախ էր դառնում ուղենիշ և անգամ օրինություն դեպի Մեծ Արվեստ: Երիտասարդ ստեղծագործողների, մանավանդ հայ ստեղծագործողների համար, հաճախ Մոսկվան մեկ հասցե ուներ՝ Արամ Խաչատրյան: Եվ թվում էր, թե բացվելու էին կոնսերվատորիայի, Գնեսինների կրթօջախի, լուսավոր համերգասրահների փակ դռները, Երևանից ժամանած, տակավին անփորձ ու անհայտ յուրաքանչյուր երաժշտի համար:

Արամ Խաչատրյանի հետ առաջին հանդիպումը տեղի է ունեցել դեռ այն ժամանակ, երբ Առնոն ընդամենը 5 տարեկան էր և հաճախում էր մանկապարտեզ (1. էջ ..): Այս հանդիպման մասին Առնոն այսպես է հիշում. «Մի անգամ, հերթական զբոսանքներից մեկի ժամանակ, մեր դաստիարակչուհին ասաց, որ ինչ որ մասնագետ է եկել Մոսկվայից, ով պետք է ստուգի մեր լսողությունը և երբ նա եկավ ու լսեց մեզ բոլորիս, հատուկ շեշտեց իմ մասին ասելով թե. «այս տղային երաժշտական կրթություն է անհրաժեշտ»» (2. էջ 51-53):

Ռոբերտ Շումանի՝ Յոհաննես Բրամսի մասին գրած վերջին հոդվածը՝ «Նոր ուղիներ», որտեղ Շումանը բարձր էր գնահատել նրա արվեստը, մեծ գերմանացին ողջ կյանքում պահում էր իր համար իբրև մկրտություն երաժշտական աշխարհում: Կարծում ենք, Առնոյի համար էլ խաչատրյանական այդ հպանցիկ կարծիքը որոշիչ է դառնում:

Ինչպես նշում է ինքը՝ կոմպոզիտորը. «Ես ընդունվեցի Երևանի միակ երաժշտական ուսումնական հաստատությունը, որն անվանում էին կոնսերվատորիա,- հիշում է Բաբաջանյանը: 10-15 տարի անց, երբ հանդիպեցի իմ դաստիարակչուհուն՝ Հեղինե (Էլլա) Քացախյանին, հարցրի՝ իսկ ո՞վ էր այն տղամարդը, որ լսեց ինձ մանկապարտեզում, և միայն այդ ժամանակ իմացա, որ դա Արամ Խաչատրյանն է եղել» (2. էջ 51-53):

Առնոն և Արամ Խաչատրյանը պաշտոնապես ծանոթանում են 1938 թվականին համերգների շրջանակներում: Դա Ավագի ու Կրտսերի կարևոր հանդիպում էր, երկու մեծությունների, ում գործունեությունը Ոսկե տառերով պետք է գրվեր հայ երաժշտության պատմության էջերում: Խաչատրյանը խորհուրդ է տալիս Բաբաջանյանին մեկնել Մոսկվա՝ ուսումը շարունակելու: Հետևելով Խաչատրյանի խորհրդին՝ Առնոն 17 տարեկանում մեկնում է Մոսկվա, հանձնում ընդունելության բոլոր քննությունները, սակայն որոշ փաստաթղթերի բացակայության պատճառով նրան չեն ընդունում կոնսերվատորիա:

Խաչատրյանի միջնորդությամբ նույն տարում Բաբաջանյանն ընդունվում է Գնեսինների անվան երաժշտական ուսումնարան, այնուհետև Կոնսերվատորիա՝ դաշնամուրային բաժին՝ Կոնստանտին Իգումնովի դասարան, իսկ արդեն 1942 թվականից ուսումը շարունակում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժնում՝ Սարգիս Բարխուդարյանի և Վարդգես Տալյանի մասնագիտական դասարաններում:

Բեռլինում և Պետրոգրադում ուսում առած Բարխուդարյանն Առնո Բաբաջանյանի առջև բացում է Բարձր կոմպոզիտորության դռները, իսկ Վարդգես Տալյանի հմուտ ղեկավարումն Առնոյի ստեղծագործական տաղանդը դնում է ազգային ամուր հիմքերի վրա:

50-ականներին Բաբաջանյանը դասավանդում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, փոխանցելով ոչ միայն կոմպոզիտորական, այլև դաշնամուրային դասավանդման իր յուրօրինակ մեթոդաբանությունը: 1956 թվականից Բաբաջանյանն ապրում է Մոսկվայում՝ մշտապես պահելով կապը Մայր Հայրենիքի հետ:

Առնոն և հնգյակի անդամներ Էդվարդ Միրզոյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Ադամ Խուդոյանը, Արամ Խաչատրյանի հետ հանդիպում էին Մոսկվայի «Հայ Արտ տան»-ը, որը դարձել էր կոմպոզիտորների մասնագիտական կատարելագործման դարբնոց: Կոմպոզիտորներն այս մասին հիշելիս ասում են:

«Մենք սովորում էինք երաժշտական վարպետություն Արամ Խաչատրյանի մոտ», խաչատրյանական հուժկու անհատականության և ամենատես հսկողության ներքո:

Նվիրվում է Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին

Գրեթե սերնդակից այս երկու կոմպոզիտորները, ստեղծագործելով կողք-կողքի, հայ երաժշտարվեստում նոր էջեր բացեցին (2. էջ 51-53)։ Շրջադարձային էր նոր ժանրերի ներմուծումն այդ թվում գործիքային կոնցերտը, որի մուտքը նշանավորվեց Խաչատրյանական հանրահայտ ջութակի Կոնցերտով՝ 1940 թվականին։ Սա դարձավ ոչ միայն առաջին հայկական Կոնցերտն այլ նաև հիմք դրեց Հայաստանում կոնցերտի ժանրի զարգացմանը։ Տաղանդավոր սերունդը գալիս էր լրացնելու այդ՝ այսպես ասած «բացթողումները», որոնք հայ երաժշտությունն ուներ պատմական անբարենպաստ իրողությունների արդյունքում։

Կոնցերտի ժանրի հաջորդ ստեղծագործությունն արդեն՝ Առնո Բաբաջանյանի ջութակի Կոնցերտն է, որը գրվել է՝ 1949 թվականին։ Բաբաջանյանն իր ջութակի Կոնցերտում շարունակում և զարգացնում է Խաչատրյանի կողմից կիրառված ժանրային առանձնահատկությունները, մասնավորապես՝ իմպրովիզացիոն ոճը, ազգային հենքն ու կոնցերտային ընդգծված ուղղվածությունը։ Ձևակառուցողական տեսակետից երկու Կոնցերտներն էլ պահպանում են դասական կոնցերտի ձևակազմական առանձնահատկությունները ավանդական հատկանիշները (եռամաս ցիկլ, ձև, և այլն)։

Ինչպես նշում է Սուսաննա Ամատունին. «Բաբաջանյանը Խաչատրյանին մոտ է ոչ միայն իրենց արվեստի համար ընդհանուր՝ ազգային-ժողովրդական հիմքով այլ նաև այդ հիմքի վրա կառուցված ընդհանրական-սիմֆոնիկ մտածելակերպի տեսակով» (3. էջ 26-27)։

Արամ Խաչատրյանի մահվան լուրը շատ ծանր է տանում Առնոն և ի հիշատակ ավագ սերնդակցի գրում է «Էլեգիա» դաշնամուրի համար, որտեղ օգտագործում է Սայաթ-Նովայի «Քանի վուր ջան իմ» երգի մեղեդին։ Խաչատրյանի մեջ նա, ասես, տեսնում էր հայկական աշուղական ավանդույթի (Նաղաշ Հովնաթան ու Բաղդասար Դպիր) բարձրագույն, սիմֆոնիզացված դրսևորումը։

«Էլեգիան» այն եզակի դեպքերից է, երբ Բաբաջանյանն ստեղծագործության մեջ կիրառում է կոնկրետ ֆոլկլորային նյութ։ Ժամանակին Սայաթ-Նովայի վերոնշյալ մեղեդին հիացրել է Խաչատրյանին, և վերջինս արտահայտել է իր հիացմունքն՝ ասելով. «Ինչպե՞ս կարելի էր ստեղծել այսպիսի հանճարեղ մեղեդի»։ Եվ ակամայից Խաչատրյանի հիշատակն Առնոն անմահացրել է հենց այս երկով։

Վերջաբան

Վերջաբանին մեջբերենք Առնո Բաբաջանյանի խոսքերը Խաչատրյանի մասին. «Իմ բոլոր վաղ ստեղծագործություններում մեծ է Խաչատրյանի ազդեցությունը, իմ ամբողջ կյանքում նա մեծ դեր ունի։ Հիմա, երբ նա չկա, ես ինձ այնպես որբացած եմ զգում, ինչպես մարդ կզգա հորը կորցնելուց, կապ չունի՝ որ տարիքում։ Որբացել ենք մենք բոլորս» (4. էջ 51-53)։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Аматуни С. Б.,* Арно Бабаджанян: инструментальное творчество., Ер.: Советакан грох, 1985.
2. “Счастье, когда твоя песня становится частью жизни народа”., //Гарун, N 8, 1978.

Amatuni S. B., "Arno Babajanian: Instrumental Work", Yerevan: Sovetakan Grogh, 1985.

“Happiness, is when your song becomes part of the life of the people”, //Garun, N.8, 1978, pp. 51-53.

REFERENCES

1. Amatuni S. B., "Amo Babajanian: instrumental’noe tvorchestvo.,Work", Yer.: Sovetakan Grogh, 1985.

“Schast’e, kogda tvoya pesnya stanovitsya chast’yu zhizni naroda”, //Garun, N. 8, 1978.

Հեղինակի մասին. *ԼԻԱՆԱ ԱՐՄԵՆԻ ՊՈՂՈՍՅԱՆ (ծ. 24.9.2001 թ.) Ավարտել է՝ 2020-ին Ռ. Մելիքյանի անվան երաժշտական քոլեջի դաշնամուրային բաժինը (պրոֆեսոր Գ. Ռ. Ավանեսովի դասարան)։ Սովորում է ԵՊԿ երաժշտագիտության բաժնում բակալավրական կրթության 4-րդ կուրսում (ղեկ.՝ արվեստագիտության թեկնածու Լ. Զ. Սահակյան)։ Ելույթներ է ունեցել գեկուցումներով ՈՒԳՍԸ գիտաժողովներում՝ գիտական նախասիրությունների շրջանակն է Առնո Բաբաջանյանի ստեղծագործական ժառանգությունը։*

About the author: *LIANA ARMEN POGHOSYAN (born September 24, 2001). She graduated from the Piano Department of R. Melikyan Music College (class of Professor G. R. Avanesov) in 2020. Currently, she is a fourth-year bachelor student at the Musicology Department at Yerevan Komitas State Conservatory (supervisor: L. Z. Sahakyan, PhD in Arts). She has presented at SSCS conferences, and her research interests focus on the composer Amo Babajanyan's creative legacy.*

Об авторе: *ЛИАНА АРМЕНОВНА ПОГОСЯН (род. 24.9.2001 г.) Окончила фортепианное отделение музыкального колледжа им. Меликяна, класс профессора Г.Р.Аванесова (2020). Студентка 4-го курса бакалавриата музыковедческого отделения ЕГК. Руководитель - кандидат искусствоведения Л. З. Саакян. Выступала с докладами на конференциях СНТО. Основой научных предпочтений является творческое наследие Арно Бабаджаняна.*